



127. ԶՈՒՄՇԻՎՆ ՈՒ ԲԱՌԲԱՌ

Օրերուց օր մե՛ Ջումշիդ թաղավոր դիւրիս կը փոխե, մըջ ժողովրդին կը զվոննի: Կը մտնա բաորրուու դուքան, օր թրաշ էզնի, կը տեսնա՝ մուշտարի շկա, բաորառ պարապ կաներ է:

— Բա՛ռբառ,— կըսե,— զիսի թրաշ կէնի՞ս, լե դինաս մեկ փարա ունիմ:

— Համեցի՛ր,— կըսե բաորառ,— կը տեսնաս՝ պարապ իմ, փարեմ լե փարա է:

Ջթաղավոր կը նստըցու, զերես կը սաբոնե, դառնիլն կտոնե ձեռք, մատ մե տեղ թրաշ կէնե թե չէ, ուր հարուստ մուշտարեւտանուց մեկ ներս կը մտնե:

— Մա՛րդ,— կըսե բաորառ թաղավորին,— յելի նստի մեկ դեն, հարի զաղին թրաշ էնիմ, սորա քու յերես:

Թաղավոր սաբոնած յերեսով գելնա նստի մեկ դեն, հարի աղեն կը թրաշվի, սորա՛ ինք: Ջուր սակոյի փողպատն օր կը բանա, օր բարբըռին փարա տա, թաղավորական նշաններ կերեան, բարբառ կը ցմքի, յերեսի գունք կը թալե, գընկնա թաղավորի յոտք:

Թաղավոր կըսե.

— Յե՛լի յոտքի: Աղքըտի շոր հագած մարդուն բանի տեղ չըն դնի, յերես չըն իշկի, գուզե թաղավոր էղնի:

